ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-11/23

ք. Երևան

«30» հունիսի 2023 թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ն, ի դեմս Խորհրդի նախագահ Արա Շիրինյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Գագիկ Գրիգորյանի, որը գործում է «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում ապահովագրավճարը, հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է համապատասխան հաշվի և հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ շուտ քան 2023 թվականի հուլիսի 19-ը, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Եթե նույնիսկ կողմերի միջև ստորագրվող այլ փաստաթղթով Պատվիրատուի համար սահմանվում է վճարման ավելի վաղ ժամկետ, ապա գործում է սույն պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.4. Սույն պայմանագրի առարկայի վերաբերյալ կողմերի կողմից ստորագրվող ցանկացած լրացուցիչ փաստաթղթով պատվիրատուի համար չի կարող սահմանվել վճարման լրացուցիչ պարտավորություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև

պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Ա. Շիրինյան

ԿԱՏԱՐՈՂ

«Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ

ք. Երևան, Հյուսիսային Պող. 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581

Գործադիր տնօրեն՝ Գ. Գրիգորյան

Հավելված N 1
«30» 06 2023 թ. կնքված
«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-11/23» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	66511170/1	«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկի հաշվեկշռում հաշվառված 043LL55 պետհամարանիշով BMW 523I (թողարկման տարեթիվ՝ 2006 թ., շարժիչի հզորությունը՝ 177 ձիաուժ, նույնացման համար (vin)՝ WBANE310X0B928102) և 202SS60 պետհամարանիշով Chevrolet Niva 21230 (թողարկման տարեթիվ՝ 2006թ., շարժիչի հզորությունը՝ 80 ձիաուժ, նույնացման համար (vin)՝ X9L21230060123743) ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր և կամավոր ապահովագրություն: Սույն պայմանագրից բխող վկայագրերը կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:	դրամ	60,000.0	1	ք. Երևան Ալեք Մանուկյան 5	01.07.2023թ-30.06.2024թ ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Ա. Շիրինյան

ԿԱՏԱՐՈՂ

«Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ

ք. Երևան, Հյուսիսային Պող. 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581

Գործադիր տնօրեն՝ Գ. Գրիգորյան

Հավելված N 2
«30» 06 2023 թ. կնքված
«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-11/23» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	66511170/1	Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ	-	-	-	-	-	60000	60000	60000	60000	60000	60000	60000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Ա. Շիրինյան

ԿԱՏԱՐՈՂ

«Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ

ք. Երևան, Հյուսիսային Պող. 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570003731650100
ՀՎՀՀ 02589581

Գործադիր տնօրեն՝ Գ. Գրիգորյան

Հավելված N 3
« » 2023 թ. կնքված
«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-11/23» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » 2023 թ. կնքված
«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-11/23» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Սույն փաստաթուղթը կազմված և փոխանցված (փոխանակված) է ԱՄՄՊ համակարգի միջոցով: 04/07/2023 14:55

LIGA INSURANCE

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ՎԿԱՅԱԳՐԻ N: S W 0 2 8 8 2 7

Ապահովագրության դասը՝ Ցամաքային Ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն

1	Ապահովագրող	«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, Հայաստան, 0001, Երևան Հյուսիսային պող. 1, հեռախոս՝ +374-12-888888, էլ. փոստ՝ sales@rgs.am, կայք՝ www.rgs.am, ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 11, լիցենզիա՝ ԱՊՈ 0009, ՀՎՀՀ՝ 02589581, բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ, հ/հ՝ 1570003731650100

2	Ապահովադիր				3	Ավտոտրանսպորտային միջոց		
Անվանում	«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ԱՅԼ	Հեռախոս	+374 (010) 575662		Տեսակ	Մարդատար		
					Հ/հ	043LL55	Շարժիչի հզ-ն (ձ/ու)	177
ՀՎՀՀ	01539597	Հաշվառման հասցե	ՀՀ, Երևան, Կենտրոն, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, 5		Օգտագործման նպատակ	Ծառայողական		
Էլ. փոստի հասցե	info@tvradiocouncil.am							
Ապահովադրին պատկանող բանկային հ/հ	Դեպոզիտարիա900011430163	ԲՄ դաս, փոփոխման ամս.	3, 09/07/2022					

4	Ապահովագրության ժամկետ	Սկիզբ՝ 01/07/2023 00:00	Ավարտ՝ 30/06/2024

5	Ապահովագրավճար առանց ԲՄ դասի	Բոնուս	Վճարման ենթակա ապահովագրավճար
	-33990-ՀՀ դրամ	-8498-ՀՀ դրամ	-25000-ՀՀ դրամ

6	Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ	Միանվագ, անկանխիկ վճարում մինչև 17/07/2023

7 Ապահովագրության պայմաններ

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները (սույն պայմանագրում, նաև՝ ԱՊՊԱ պայմաններ) ներառյալ ապահովագրական գումարի չափը, պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ստացման ու օգտագործման պայմանները, ապահովագրական պատահարները (ռիսկերը) և սույն պայմանագրի շրջանակներում կամ դրանից դուրս ԱՊՊԱ ոլորտում իրականացվող ծանուցումների կատարման կարգն ու պայմանները, սահմանված են Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) իրավասու մարմնի կողմից հաստատված և Բյուրոյի՝ www.appa.am պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրապարակված ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով, որոնք կիրառվում են անմիջականորեն: ԱՊՊԱ ընդհանուր պայմանների առանձին դրույթներ կարող են փոփոխվել, վերացվել կամ լրացվել բացառապես այն ընդունած մարմնի կամ Կենտրոնական բանկի կողմից՝ օրենքով սահմանված կարգով, որի մասին Ապահովադիրը տեղեկանում է Բյուրոյի վերոհիշյալ ինտերնետային կայքից, որտեղ փոփոխությունները և (կամ) լրացումները հրապարակվում են գործողության մեջ մտնելու պահից առնվազն տասն օրացուցային օր առաջ:

8 Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ

Ապահովադիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո 40 րոպեի ընթացքում, իսկ ապահովագրական պատահարի հետևանքով անձնական վնասների առկայության դեպքում ԱՊՊԱ պայմաններով սահմանված ժամկետներում, այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով (012) 88 88 88 հեռախոսահամարով (որևէ մեկով):

	9.1 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	9.2 ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
	ՌՈԶԱԼԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, 003103173, 11, 20/05/2008	ԱՐԱ ՇԻՐԻՆՅԱՆ
9	Ստորագրություն	Ծանոթացել և համաձայն եմ Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում հրապարակված ԱՊՊԱ ընդհանուր պայմաններին՝ ներառյալ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում և դրանից հետո ծանուցումների կիրառման կարգին, ուստի խնդրում եմ դրանք համարել իմ կողմից ստացված: Ստորագրություն
10	Պայմանագրի կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝	30/06/2023

11	Սույն պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Ապահովագրողը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել:	
12	Նշումներ	Կրկնօրինակ

Սույն փաստաթուղթը կազմված և փոխանցված (փոխանակված) է ԱՄՄՊ համակարգի միջոցով: 04/07/2023 14:54

LIGA INSURANCE

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԿԿԱՅԱԳՐԻ N: S W 0 2 8 8 1 6

Ապահովագրության դասը՝ Ցամաքային Ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն

1	Ապահովագրող	«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, Հայաստան, 0001, Երևան Հյուսիսային պող. 1, հեռախոս՝ +374-12-888888, էլ. փոստ՝ sales@rgs.am, կայք՝ www.rgs.am, ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 11, լիցենզիա՝ ԱՊՈ 0009, ՀՎՀՀ՝ 02589581, բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ, հ/հ՝ 1570003731650100

2	Ապահովադիր				3	Ավտոտրանսպորտային միջոց		
Անվանում	«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ Այլ	Հեռախոս	+374 (010) 575662		Տեսակ	Մարդատար		
					Հ/հ	202SS60	Շարժիչի հզ-ն (ձ/ու)	80
ՀՎՀՀ	01539597	Հաշվառման հասցե	ՀՀ, Երևան, Կենտրոն, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, 5		Օգտագործման նպատակ	Ծառայողական		
Էլ. փոստի հասցե	info@tvradiocouncil.am							
Ապահովադրին պատկանող բանկային հ/հ	Դեպոզիտարիա900011430163	ԲՄ դաս, փոփոխման ամս.	3, 09/07/2022					

4	Ապահովագրության ժամկետ	Սկիզբ՝ 01/07/2023 00:00	Ավարտ՝ 30/06/2024

5	Ապահովագրավճար առանց ԲՄ դասի	Բոնուս	Վճարման ենթակա ապահովագրավճար
	-33990-ՀՀ դրամ	-8498-ՀՀ դրամ	-25000-ՀՀ դրամ

6	Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ	Միանվագ, անկանխիկ վճարում մինչև 17/07/2023

7 Ապահովագրության պայմաններ

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները (սույն պայմանագրում, նաև՝ ԱՊՊԱ պայմաններ)՝ ներառյալ ապահովագրական գումարի չափը, պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ստացման ու օգտագործման պայմանները, ապահովագրական պատահարները (ռիսկերը) և սույն պայմանագրի շրջանակներում կամ դրանից դուրս ԱՊՊԱ ոլորտում իրականացվող ծանուցումների կատարման կարգն ու պայմանները, սահմանված են Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) իրավասու մարմնի կողմից հաստատված և Բյուրոյի՝ www.appa.am պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրապարակված ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով, որոնք կիրառվում են անմիջականորեն: ԱՊՊԱ ընդհանուր պայմանների առանձին դրույթներ կարող են փոփոխվել, վերացվել կամ լրացվել բացառապես այն ընդունած մարմնի կամ կենտրոնական բանկի կողմից՝ օրենքով սահմանված կարգով, որի մասին Ապահովադիրը տեղեկանում է Բյուրոյի վերոհիշյալ ինտերնետային կայքից, որտեղ փոփոխությունները և (կամ) լրացումները հրապարակվում են գործողության մեջ մտնելու պահից առնվազն տասն օրացուցային օր առաջ:

8 Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ

Ապահովադիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո 40 րոպեի ընթացքում, իսկ ապահովագրական պատահարի հետևանքով անձնական վնասների առկայության դեպքում ԱՊՊԱ պայմաններով սահմանված ժամկետներում, այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով (012) 88 88 88 հեռախոսահամարով (որևէ մեկով):

9	9.1 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	9.2 ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
	ՈՌՁԱԼԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, 003103173, 11, 20/05/2008	ԱՐԱ ՇԻՐԻՆՅԱՆ
	Ստորագրություն	Ծանոթացել և համաձայն եմ Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում հրապարակված ԱՊՊԱ ընդհանուր պայմաններին՝ ներառյալ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում և դրանից հետո ծանուցումների կիրառման կարգին, ուստի խնդրում եմ դրանք համարել իմ կողմից ստացված: Ստորագրություն
10	Պայմանագրի կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝	30/06/2023

11	Սույն պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Ապահովագրողը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել:	
12	Նշումներ	Կրկնօրինակ

ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

VL | 678199

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ՝ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ
Լիցենզիա՝ թիվ ԱՊՈ 000
ՀՎՀՀ՝ 02589581, ՀՀ ԿԲ գրանցում՝ 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ, h / h 15700037316501
ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պողոտա
+ (37412) 888888, info@RGS.am, www.LIGAINSURANCE.a

Ապահովագրության դաս	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն

Ապահովադիր	««ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»	Էլ.հասցե	info@tvradiocouncil.am	Հեռ.՝	(010) 575662, (094) 00469
01539597		info@tvradiocouncil.am	900011430163, Երևանի 1 գանձապետական բաժանմունք		
ՀՎՀՀ		Էլ.փոստ	Հ/Հ, Բանկ		
ՀՀ, Երևան, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, 5տ.,		ՀՀ, Երևան, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, 5տ.			
պետ. գրանցման վկայական		բնակության և հաշվառման հասցե			

Ավտոտրանսպորտային միջոցների (Ա/մ) քանակ	1	մեկից ավելի Ա/մ-ների դեպքում՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ դաշտերը՝ համաձայն կից Հավելվածի:

Ավտոտրանսպորտային միջոց	Ա/մ տեսակը	մակնիշը, տիպարը	հաշվ. համարանի
	Մարդատար	Chevrolet Chevrolet Niva	202SS60
	հաշվ. վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը	շարժիչի հզորությունը	շարժիչի համար
	XB040640	80	0134719

տարեթիվը	գույնը	թափքի համարը	նույնացման համարը (VIN)	վազքը (կմ)
2006	ՀԱՐԴԱԳՈՂԻ ԾԱՆԱՊԱՐՀ	60123743	X9L21230060123743	10

Շահագործման նպատակ	☐ անձնական	☐ առևտրային օգտագործման	☑ ծառայողական
Շահագործման հիմնական վայրը	☐	☑ Երևան	☐ գյուղական ☑ քաղաքային

Լիազորված տիրապետողներ (առանց սահմանափակումների)

Ապահովագրության ժամկետ	սկիզբ՝ 01/07/2023թ. ժ 00:00 ավարտ՝ 30/06/2024թ. ժ 23:59
Ագրեգատային ապահովագրական գումար (յուրաքանչյուր Ա/մ գծով)	Անձնական վնասների համար՝ 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ ըստ յուրաքանչյուր տուժողի 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ գումար ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի Գույքին պատճառված վնասների համար՝ 3 000 000 ՀՀ դրամ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի
Ոչ պայմանական չհատուցվող գումար	Սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործում բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին ՀՀ օրենսդրությա անձնական և գույքային վնասների համար սահմանված ապահովագրական գումարնե համապատասխան առավելագույն սահմանաչափերը:
Ապահովագրավճար	5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ

Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ

☐ կանխիկ	☐ ապահովագրավճարը վճարված է ամբողջությամբ սույն պայմանագրի կնքման պահին ☐ ՀՀ դրամի չափով ապահովագրավճարը վճարված է սույն պայմանագրի կնքման պահին, իսկ ապահովագրավճարի մնացած մասը հետևյալ կարգով՝
☑ անկանխիկ	Ապահովագրավճարը վճարվում է հետևյալ կարգով և ժամկետում (ժամկետներում) ապահովագրավճարը պետք է վճարվի մինչև 17/07/2023թ.:

Ապահովագրական պատահարներ (ռիսկեր)	Համաձայն ԱՊԿԱ Պայմանների 3-րդ գլխի
Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ	Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձ պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով 012 88 88 88 շուրջօրյա հեռախոսահամարով:
Ապահովագրության պայմանները	ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապահովագրության պայմանագրի/վկայագրի պարտադիր պայմանները/վավերապայմանները, ինչպես նաև վեճերի լուծման կարգը կարգավորվում՝ սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող և «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի 22.05.2023թ Խորհրդի նիստի թիվ 06 արձանագրությամբ հաստատված ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ) ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ (Կոդ TC750-01-03, խմբ.04, սո Պայմանագրում նաև՝ Պայմաններ):

Լրացուցիչ դրույթներ	15.1. Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության գծ ապահովագրական հատուցման վճարումն ըստ ԱՊՊԱ օրենսդրության Ապահովագրողի կողմից ենթակա մերժման և/կամ Ապահովագրողն ունի հետադարձ պահանջի իրավունք, սույն Պայմանագրով սույ իրադարձության գծով հատուցման վճարումն Ապահովագրողի կողմից ենթակա է մերժման: 15.2.Սույն պայմանագրի շրջանակներում Ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարա որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել: 15.3. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագրի կնքմանը հաջորդող 7 (Յ աշխատանքային օրերի ընթացքում միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ համաձայն «Ապահովագրության ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի, 5.1. ենթակետի: 15.4. Սույն պայմանագիրը (այդ թվում պայմանագրին կից կատարվող փոփոխությունները և լրացումնե կարող է կնքվել Կողմերի իրավասու անձանց էլեկտրոնային ստորագրություններով մեկ փաստաթո կազմելու միջոցով և Կողմերի իրավասու անձանց էլեկտրոնային ստորագրություններով կնքված ստորագրված պայմանագիրը հանդիսանում է պատշաճ կնքված գրավոր գործարք և ունի լիար իրավաբանական ուժ սույն պայմանագրի կողմերի և ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագ նախատեսված այլ անձանց համար: 15.5. Ապահովադիրը տալիս է համաձայնությունն առ այն, որ Ապահովագրողը սույն Պայմանագրի կնքմ պահից մինչև սույն համաձայնության հետ կանչելը կարող է մշակել, այդ թվում՝ հավաքագրել, մուտքագ պահպանել, օգտագործել, ուղղել Ապահովադրին վերաբերող և սույն Պայմանագրի կնքման հա օգտագործված անձնական տվյալները կամ իրականացնել օրենքով չարգելված այլ գործողություններ, թվում՝ տվյալների վերաբերյալ կատարել լրացուցիչ հարցում օրենքով չարգելված աղբյուրնե հետագայում ապահովագրության ցանկացած տեսակի գծով ծառայություններ մատուցելու նպատակ Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի կողմից՝ դիմումի հիման վրա, այդ թվ էլեկտրոնային եղանակով, որը պետք է ուղարկվի Ապահովադրի կողմից Պայմանագրում նշ էլեկտրոնային փոստի հասցեից: 15.6. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հավաստում և ընդունում են, որ պայմանագիրը (այդ թ պայմանագրին կից կատարվող փոփոխությունները և լրացումները) համարվում է գրավոր ձևով կնք կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրա հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկութ կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տ հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնս հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագրի կնքումը, էլեկտրոնային թվ ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությ ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը: 15.7. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին և հավաստում են, որ Ապահովագր Ապահովադիրը/Ապահովագրված անձը/ միմյանց միջև փաստաթղթերի (դիմումներ, այդ թվում՝ հայտ դիմում, ծանուցումներ և այլն) կամ այլ տեղեկատվության փոխանակումը կարող են իրականացնել նա փոստի միջոցով՝ Պայմանագրում նշված կամ միմյանց գրավոր տրամադրած էլ.փոստի հասցեներից, և կարգով ուղարկված և/կամ ստացված դիմումները, ծանուցումները և պայմանագրի հետ կապված ամ գրագրությունը համարվում է պատշաճ տեղեկատվություն, դիմում, այդ թվում՝ հայտային դիմ ծանուցում: Պայմանագրում նշված էլ. փոստի հասցեներից փաստաթղթերի կամ տեղեկատվութ ուղարկումը համարվում է պատշաճ ծանուցում: 15.8. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հավաստում և ընդունում են, որ պայմանագիրը համարվ գրավոր ձևով կնքված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի դրույթների համա Ապահովադրի կողմից սույն Պայմանագրի ապահովագրավճարը Ապահովագրողի հաշվեհամ փոխանցելու պահից: Վճարում կատարելով Ապահովադիրն անվերապահորեն համաձայնում և հավաստ որ համաձայն է Պայմանագրի բովանդակությանը, պայմաններին և Պայմանագրի նշված եղան կնքմանը:
Պայմանագրի կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝	30/06/2023թ.
Նշումներ	SW028816

18. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
Ռոզալինա Հովհաննիսյան Լևոն (A7-S11)	«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
003103173, տրվել է 12/06/2015թ., 011 կողմից	ԱՐԱ ՇԻՐԻՆՅԱՆ
ՀՀ ԿԲ հաշվառման վկայական/Հրաման՝ 150-L	Սույն Պայմանագիրը, Պայմանները ստացել, ծանոթացել և համաձայն եմ: «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը ստացել և ծանոթացել եմ:
ստորագրություն 30/06/2023	ստորագրություն 30/06/2

ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

VL 678198

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ՝ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Լիցենզիա՝ թիվ ԱՊՈ 0009
ՀՎՀՀ՝ 02589581, ՀՀ ԿԲ գրանցում՝ 11
«Ամերիաբանկ» ՓԲԸ, h / h 1570003731650100
ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պողոտա 1
+ (37412) 888888, info@RGS.am, www.LIGAINSURANCE.am

Ապահովագրության դաս	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն					
1.	Ապահովադիր	««ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»	Էլ.հասցե	info@tvradiocouncil.am	Հեռ.՝	(010) 575662, (094) 004696
	01539597	info@tvradiocouncil.am	900011430163, Երևանի 1 գանձապետական բաժանմունք			
	ՀՎՀՀ	Էլ.փոստ	Հ/Հ, Բանկ			
	ՀՀ, Երևան, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, 5տ., ՀՀ, Երևան, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, 5տ.					
	պետ. գրանցման վկայական	բնակության և հաշվառման հասցե				
2.	Ավտոտրանսպորտային միջոցների (Ա/Մ) քանակ	1	մեկից ավելի Ա/Մ-ների դեպքում՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ դաշտերը՝ համաձայն կից Հավելվածի:			
3.	Ավտոտրանսպորտային միջոց	Ա/Մ տեսակը	մակնիշը, տիպարը	հաշվ. համարանիշը		
		Մարդատար	BMW BMW 523 I	043LL55		
		հաշվ. վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը	շարժիչի հզորությունը	շարժիչի համարը		
		XB040641	177	02566156		
	տարեթիվը	գույնը	թափքի համարը	նույնացման համարը (VIN)	վազքը (կմ)	
	2006	ՍԵՎ ՄԵՏԱԼԻԿ		WBANE310X0B928102	10	
4.	Շահագործման նպատակ	☐ անձնական	☐ առևտրային օգտագործման	☑ ծառայողական		
5.	Շահագործման հիմնական վայրը	☐	☑ Երևան	☐ գյուղական	☑ քաղաքային	
6.	Լիազորված տիրապետողներ (առանց սահմանափակումների)					
7.	Ապահովագրության ժամկետ	սկիզբ՝ 01/07/2023թ. ժ 00:00	ավարտ՝ 30/06/2024թ. ժ 23:59			
8.	Ագրեգատային ապահովագրական գումար (յուրաքանչյուր Ա/Մ գծով)	Անձնական վնասների համար՝ 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ ըստ յուրաքանչյուր տուժողի 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ գումար ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի Գույքին պատճառված վնասների համար՝ 3 000 000 ՀՀ դրամ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի				
9.	Ոչ պայմանական չհատուցվող գումար	Սույն Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին ՀՀ օրենսդրությամբ անձնական և գույքային վնասների համար սահմանված ապահովագրական գումարների համապատասխան առավելագույն սահմանաչափերը:				
10.	Ապահովագրավճար	5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ				
11.	Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ					
	☐ կանխիկ	☐ ապահովագրավճարը վճարված է ամբողջությամբ սույն պայմանագրի կնքման պահին ☐ ՀՀ դրամի չափով ապահովագրավճարը վճարված է սույն պայմանագրի կնքման պահին, իսկ ապահովագրավճարի մնացած մասը հետևյալ կարգով՝				
	☑ անկանխիկ	Ապահովագրավճարը վճարվում է հետևյալ կարգով և ժամկետում (ժամկետներում) ապահովագրավճարը պետք է վճարվի մինչև 30/06/2023թ.:				
12.	Ապահովագրական պատահարներ (ռիսկեր)	Համաձայն ԱՊԿԱ Պայմանների 3-րդ գլխի				
13.	Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ	Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով 012 88 88 88 շուրջօրյա հեռախոսահամարով:				
14.	Ապահովագրության պայմանները	ՀՀ օրենսդրությամբ սահմանված ապահովագրության պայմանագրի/վկայագրի պարտադիր պայմանները/վավերապայմանները, ինչպես նաև վեճերի լուծման կարգը կարգավորվում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող և «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի 22.05.2023թ.-ի խորհրդի նիստի թիվ 06 արձանագրությամբ հաստատված ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊԿԱ) ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ (Կոդ TC750-01-03, խմբ.04, սույն Պայմանագրում նաև՝ Պայմաններ):				

VL 678198

15.	Լրացուցիչ դրույթներ	15.1. Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության գծով ապահովագրական հատուցման վճարումն ըստ ԱՊՊԱ օրենսդրության Ապահովագրողի կողմից ենթակա է մերժման և/կամ Ապահովագրողն ունի հետադարձ պահանջի իրավունք, սույն Պայմանագրով այդ իրադարձության գծով հատուցման վճարումն Ապահովագրողի կողմից ենթակա է մերժման: 15.2.Սույն պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել: 15.3. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք ունի Պայմանագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրերի ընթացքում միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի, 5.1. ենթակետի: 15.4. Սույն պայմանագիրը (այդ թվում պայմանագրին կից կատարվող փոփոխությունները և լրացումները) կարող է կնքվել Կողմերի իրավասու անձանց էլեկտրոնային ստորագրություններով մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով և Կողմերի իրավասու անձանց էլեկտրոնային ստորագրություններով կնքված ու ստորագրված պայմանագիրը հանդիսանում է պատշաճ կնքված գրավոր գործարք և ունի լիարժեք իրավաբանական ուժ սույն պայմանագրի կողմերի և ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված այլ անձանց համար: 15.5. Ապահովադիրը տալիս է համաձայնությունն առ այն, որ Ապահովագրողը սույն Պայմանագրի կնքման պահից մինչև սույն համաձայնության հետ կանչելը կարող է մշակել, այդ թվում՝ հավաքագրել, մուտքագրել, պահպանել, օգտագործել, ուղղել Ապահովադրին վերաբերող և սույն Պայմանագրի կնքման համար օգտագործված անձնական տվյալները կամ իրականացնել օրենքով չարգելված այլ գործողություններ, այդ թվում՝ տվյալների վերաբերյալ կատարել լրացուցիչ հարցում օրենքով չարգելված աղբյուրների՝ հետագայում ապահովագրության ցանկացած տեսակի գծով ծառայություններ մատուցելու նպատակով: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի կողմից՝ դիմումի հիման վրա, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, որը պետք է ուղարկվի Ապահովադրի կողմից Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից: 15.6. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հավաստում և ընդունում են, որ պայմանագիրը (այդ թվում պայմանագրին կից կատարվող փոփոխությունները և լրացումները) համարվում է գրավոր ձևով կնքված կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագրի կնքումը, էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը: 15.7. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին և հավաստում են, որ Ապահովագրողը, Ապահովադիրը/Ապահովագրված անձը/ միմյանց միջև փաստաթղթերի (դիմումներ, այդ թվում՝ հայտային դիմում, ծանուցումներ և այլն) կամ այլ տեղեկատվության փոխանակումը կարող են իրականացնել նաև էլ. փոստի միջոցով՝ Պայմանագրում նշված կամ միմյանց գրավոր տրամադրած էլ.փոստի հասցեներից, և այդ կարգով ուղարկված և/կամ ստացված դիմումները, ծանուցումները և պայմանագրի հետ կապված ամբողջ գրագրությունը համարվում է պատշաճ տեղեկատվություն, դիմում, այդ թվում՝ հայտային դիմում, ծանուցում: Պայմանագրում նշված էլ. փոստի հասցեներից փաստաթղթերի կամ տեղեկատվության ուղարկումը համարվում է պատշաճ ծանուցում: 15.8. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ հավաստում և ընդունում են, որ պայմանագիրը համարվում է գրավոր ձևով կնքված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի դրույթների համաձայն, Ապահովադրի կողմից սույն Պայմանագրի ապահովագրավճարը Ապահովագրողի հաշվեհամարին փոխանցելու պահից: Վճարում կատարելով Ապահովադիրն անվերապահորեն համաձայնում և հավաստում է, որ համաձայն է Պայմանագրի բովանդակությանը, պայմաններին և Պայմանագրի նշված եղանակով կնքմանը:
17.	Պայմանագրի կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝	30/06/2023թ.
Նշումներ	SW028827	

18. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
Ռոզալինա Հովհաննիսյան Լևոն (A7-S11)	«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ
003103173, տրվել է 12/06/2015թ., 011 կողմից	ԱՐԱ ՇԻՐԻՆՅԱՆ
ՀՀ ԿԲ հաշվառման վկայական/Հրաման՝ 150-Լ	Սույն Պայմանագիրը, Պայմանները ստացել, ծանոթացել և համաձայն եմ: «Ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը ստացել և ծանոթացել եմ:
ստորագրություն 30/06/2023	ստորագրություն 30/06/2023